ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

10 հունվարի 2019 թվականի N 06-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 45-րդ հոդվածով, հիմք ընդունելով «ՊՈԼԻԱՐՄ» ՍՊ ընկերության 2018 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 008 գրությունը, Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

Հրամայում եմ

1. «ՊՈԼԻԱՐՄ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն)՝ տրամադրել երկրաբանական ուսումնասիրության իրավունքի օբյեկտ համարվող, հետևյալ կոորդինատներով՝ 1.X=4344388.2 Y=8614064.9, 2.X=4344357.5 Y=8614064.9, 3.X=4344328.5 Y=8613932.2, 4.X=4344354.3 Y=8613899.1, 5.X=4344380.3 Y=8613944.3, 6.X=4344402.5 Y=8614051.1, (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) սահմանափակված 0,007 կմ² (0,7 հա) ընդերքի տեղամասից հրաժարման թիվ 18 հրաժարման հավաստագիրը,

2.Կատարել փոփոխություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի հարթակի տարածքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/259 թույլտվությունում և ընդերքօգտագործման թիվ Պ-259 պայմանագրում (այսուհետ՝ պայմանագիր):

3.Ընդերքի գործակալության պետին՝

1) երկրաբանական ուսումնասիրության իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասի մի մասից հրաժարման հավաստագիր տրամադրելու դիմումը բավարարելու վերաբերյալ ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս՝ 10-օրյա ժամկետում պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

2) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական

ուսումնասիրության թույլտվության, ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխված տարբերակները,

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը երկրաբանական ուսումնասիրության իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

1/10/2019

X

VERIFIED OCSP 1/10/2019 18:19:12 GMT+4

Signed by: VARDANYAN HAKOB 3914890533

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
/ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ